

ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄՈՒՄ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՏՕՆԱԽՄԱՐՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 2004 թուի դեկտեմբերի 4-ի երեկոյան, Առաջնորդարանի Արշակ և Էլիանոր Տիգրանեան համալիրի Գալայճեան սրահին մէջ, թեմակալ առաջնորդ, Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրպրեանի նախագահութեամբ տեղի ունացաւ Արեւմտեան թեմի առաջին պաշտօնական ճաշկերոյթ-պարահանդէսը Սուրբ Ծննդեան փոնակապարտութեամբ հանդերձ:

Աւելի քան 300 հիւրեր՝ թեմի հոգեւորականներ, թոյր Եկեղեցիներու ներակայացուցիչներ, բաղաժի և կառավարութեան պաշտօնեաներ, գաղութի յարգարժան անդամներ, Առաջնորդարանի բարերարներ և բարեկամներ, հաւաքուած էին ջերմ և ցնձալից մթնոլորտի մէջ՝ պատուելու համար համեստափայլ փիկին Էլիանոր Տիգրանեանը և վերակացու Մայքըլ Տ. Անթոնովիչին: Սուրբ Ծննդեան ճաշկերոյթ-Պարահանդէսը նոր աւանդութիւն մը սրելո՞ճց Արեւմտեան թեմէն ներս, երբ ամէն փարի Առաջնորդարանը երկու յարգարժան անձեր՝ մին այր մարդ և միւսը՝ փիկին, մասնաւոր պատուի պիտի արժանացնէ: որպէս «Տարուան Մարդ»ը և «Տարուան Տիկին»ը:

Տիկին Էլիանոր Տիգրանեան և վերակացու Մայքըլ Անթոնովիչ իրենց կեանքը նուիրած են յօգուտ գաղութի և ժողովուրդի՝ միշտ ուրիշներուն կարիքները նախադասելով իրենց անձնական պէտքերէն:

Գեղեցիկ կերպով զարդարուած և փոնական օրուան ոգին ներշնչող սրահին մէջ, ներկաները հոգեկան գոհունակութեամբ վայելեցին Թէքեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան վարժարանի աշակերտութեան գեղեցիկ և հրապուրիչ երգեցողութիւնը, որմէ ետք օրուան յայտագրին բացումը կատարեց մեծայարգ իրաւաբան Տիար Յովսէփ Կանիմեան՝ արեւնապետը Սուրբ Ծննդեան առթիւ կազմակերպուած այս ճաշկերոյթ-պարահանդէսին:

Տիկին Սինդի Նորեան ներկայացուց իր մայրը՝ Տիկին Էլիանոր Տիգրանեանը, իսկ Տիկին Լիլի Րիեկ Պալեան ներկայացուց վերակացու Մայքըլ Անթոնովիչը:

Պատուոյ հիւրերու ջերմ արտայայտութիւններէն ետք, օրուան հանդիսավարը՝ Փրոֆ. Օշին Բէշիշեան, հրաւիրեց թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպ. Տէրպրեանը, իր փակման խօսքը ընելու: Սրբազան Հայրը ի սրտէ շնորհաւորեց օրուան Պատուոյ հիւրերը և առ ի գնահատութիւն հայ համայնքին ի նպաստ իրենց կատարած անձնուէր ծառայութիւններուն, անոնց նուիրեց Հայ մանրանկարչութենէն առնուած հոգեւոր բովանդակութեամբ պատկերներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը յայտարարեց նաեւ Մայր Տաճարի կնքահայրերուն նոր ցանկը, որոնք հաւաքաբար խոստացած են փոխադրիչ 870.000 փութարի գումար մը ի նպաստ կառուցման ծրագրի, բացի 2.020.000 փութարէն, որ հանգանակուեցաւ փարուոյս Օգոստոս 27-ի երեկոյան: Նոր կնքահայրերն են.

Սուրբ Աստուածածին Հայոց եկեղեցի, Գոսթա Մեսա	150.000 փուլար:
Անեփստան Ընդանիք (Արիզոնա)	100.000 փուլար:
(Միքայել Սարգիս Անեփստանի անունով)	
Սարո եւ Բաֆֆի Սարուքեան (Լոս Անճելըս)	100.000 փուլար:
Սարո եւ Բաֆֆի Մանուկեան (կը խոստանան հովանաւորել հանգանակութիւն մը յաւելեալ	100.000 փուլարով:
Տէր եւ Տիկին Արմէն եւ Նորա Համբար	100.000 փուլար:
Հերման Հինդիքեան (Տիթթոյթ)	100.000 փուլար:
Հաւարացեալ մը (Ֆրէզիւ)	100.000 փուլար:
Տէր եւ Տիկին Պետրոս եւ Կարինէ Տաղլեան (յաւելեալ է իրենց 100.000 փուլարի վրայ)	50.000 փուլար:
Տէր եւ Տիկին Հերոս Քաջբերունի	60.000 փուլար:
Տէր եւ Տիկին Կարալիս Պալըքճեան	10.000 փուլար:
Ընդհանուր գումար՝	870.000 փուլար:

Առաջնորդ Սրբազան Հայրը կնքահայրերուն յաջորդ ցանկը պիտի կարդայ յառաջիկայ փարուան Յունուար 6-ին, Սուրբ Ծննդեան ընդունելութեան ընթացքին: Աստուծոյ կամբով, Մայր Տաճարի հողի օրհնութիւնը քեզի պիտի ունենայ Յունիս 4-ին, 2005 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորութեամբ:

Բացի կնքահարերու ցանկի ընթերցումէն, Սրբազան Հայրը յայտարարեց թէ Առաջնորդարանի բարերարներէն Տէր եւ Տիկին Օննիկ Մեհրապեան 10.000 փուլար նուիրած էին ի նպաստ այդ երեկոյեան ճաշկերոյթ-պարահանդէսի:

Այս առիթով կը փափաքենք մեր սրտի անկեղծ շնորհաւորութիւնները յայտնել Ազնուափայլ Տիկին Էլիանոր Տիգրանեանին եւ Պապուարծան Վերակացու Մայքըլ Տ. Անթոնովիչին, որոնք արժանացան Արեւմտեան թեմի կողմէ Մարդասիրական Պապուոյ Մրցանակին եւ Քաղաքային Արժանագոյն Ծառայութեան Մրցանակին:

Մեր խորին եւ սրտաբոխ երախտագիտութիւնը կը յայտնենք առաքաձեռնութեամբ նուիրատւութիւններ կատարող Մայր Տաճարի Կնքահայրերուն եւ Բարերարներ Տէր եւ Տիկին Օննիկ Մեհրապեանին եւ կաղօթենք Աստուծոյ, որ բազմապարիկ օրհնութիւններով վարձաւորէ զիրենք: Այսպիսի օժանդակութեամբ է, որ Արեւմտեան թեմը պիտի բարգաւաճի եւ ընդարձակուի:

Սուրբ Ծննդեան Տօնակատարութեան ճաշկերոյթ-Պարահանդէսի Արեւմտեան իրավաբան Տիար Յովսէփ Կանիմեանին կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները եւ գնահատութիւնը, որ իր եւ յանձնախումբի անխոնջ ջանքերուն շնորհիւ բոլորս ալ վայելեցինք յաջող եւ հաճելի ձեռնարկ մը: Թող Աստուած իր շնորհներով եւ սիրով օրհնէ զիրենք:

ԴԻԻՄ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ